

### Առևտրային բանկերի սթրես-տեստերի վերաբերյալ

Սթրես-տեստերի նախաձեռնությունը սկսվել է դեռևս 2006 թ.-ից Եվրամիության բանկային վերահսկողների կողմից: 2006 թ.-ի դեկտեմբերի 14-ին Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովը հրապարակել է **«Technical aspects of stress testing under the supervisory review process – CP 12»** փաստաթուղթը, որտեղ ամրագրված են բանկերի համար սթրես-տեստերի նպատակը և հիմնական սկզբունքները: Հայտնի ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում, 2009 թ. դեկտեմբերին Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովը հրապարակեց այդ փաստաթղթի ավելի ընդլայնված և ճգնաժամին ադապտացված տարբերակը՝ **CEBS Guidelines on Stress Testing (CP32)**: Միաժամանակ, Բազելյան հանձնաժողովը 2009 թ. մայիսին հրապարակել է **«Principles for sound stress testing practices and supervision»** փաստաթուղթը: Նիդեռլանդների բանկային ասոցիացիայի 2010 թ.-ի Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովին ուղղված նամակում, որը վերաբերում էր սթրես-տեստերին հայտնվել է այն կարծիքը, որ վերը նշված **CEBS Guidelines on Stress Testing (CP32)** փաստաթուղթը բազելյան **«Principles for sound stress testing practices and supervision»** փաստաթուղթի փոքր ինչ ձևափոխված տարբերակն է և որ առաջին փաստաթղթում պահանջները ավելի են խստեցված: Մեր ուսումնասիրությունները նույնպես ցույց են տվել, որ առկա է նմանություն և, որ Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովի փաստաթղթում փորձ է արված հաշվի առնել ճգնաժամի գործոնը:

Ընդհանուր առմամբ, 2010 թ.-ի ապրիլ-մայիս ամսիներին Եվրամիության մի շարք բանկային միությունների և այլ բանկային ինստիտուտների կողմից (French Banking Federation, British Bankers' Association, Netherlands Bankers' Association, Association for Financial Markets in Europe, International Swaps and Derivatives Association, Inc. European Savings Banks Group, ZENTRALER KREDITAUSCHUSS<sup>1</sup>) **CEBS Guidelines on Stress Testing (CP32)** փաստաթուղթը ենթարկվել է քննադատության: Հիմնականում արված դիտողությունները կայանում են նրանում, որ սթրես-տեստի մոտեցումները երբեմն հավակնոտ են, չափից ավելի բարդեցված են և չափորոշիչները խիստ են: Առանձին դեպքերում, օրինակ՝ Նիդեռլանդների բանկերի ասոցիացիայի նամակում, առաջարկվում է հետաձգել բանկերի կողմից տեստերի անցկացման հետ կապված տվյալների հավաքագրման և տրամադրման ժամկետները: Ներկայացված նամակներում սթրես-տեստի նախաձեռնությունը ընդհանուր առմամբ նաև ողջունվում է:

Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովը 2010 թ.-ի հուլիսին CP32 փաստաթղթի համաձայն իրականացրել է սթրես-տեստեր, որի արդյունքները կներկայացնենք մի փոքր ավելի ուշ:

<sup>1</sup> Բոլոր նամակները կցված են նյութին:

Նշված սթրես-տեստը իրականացվել է Եվրամիության 20 երկրների 91 բանկերի շրջանում: Ընտրված բոլոր բանկերը միասին, ակտիվների գծով ներառել են Եվրամիության բանկային համակարգի շուրջ 65 տոկոսը: Պայման է դրվել նաև, որ միևնույն երկրում ընտրված բանկերը ընդգրկեն տվյալ երկրի բանկային համակարգի առնվազն 50 տոկոսը և վերջապես, բանկերի ընտրության ժամանակ առաջին հերթին նախատեսվել են միջսահմանային, այսինքն՝ այլ երկրներում առավելապես ինտեգրված բանկերը:

Տեստի ընդհանրական նպատակը սահմանվել է համապատասխան քաղաքականության վարման համար, հնարավոր բացասական տնտեսական զարգացումների դեպքում Եվրամիության բանկային համակարգի ճկունության վերաբերյալ տեղեկատվության ապահովումն, առանձին բանկերի կողմից վարկային և շուկայական (այդ թվում նաև երկրի կայունության) շուկային ռիսկերի կլանման կարողության գնահատումը: Տեստերը իրականացվել են առանձնացված, յուրաքանչյուր ընտրված բանկի համար, օգտագործելով բանկերի առանձին անհատականացված տվյալներ:

Սթրես-տեստի պատասխանատուն է Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովը, որը այս ուղղությամբ ակտիվ համագործակցում է Եվրոպական կենտրոնական բանկի, առանձին երկրների կենտրոնական բանկերի և Եվրահանձնաժողովի հետ: Երկրների կենտրոնական բանկերը պատասխանատու են իրենց երկրի առևտրային բանկերի տեստերի իրականացման համար:

Սթրես տեստերի գլխավոր մեթոդաբանությունը կայանում է նրանում, որ այն իրականացվել է երեք սցենարների համար՝ ելակետային, մակրոտնտեսական տագնապային, մակրոտնտեսական տագնապային և կառավարության անկայունության շոկի պայմաններում: Նշված երեք սցենարների համար հաշվարկվել են Tier 1՝ առաջին մակարդակի կապիտալի կշռի ցուցանիշը: Վերջինս բանկի բաժնետիրական կապիտալի և կոտապված պահուստների հանրագումարի հարաբերությունն է բանկի ռիսկով կշռված ակտիվների վրա:

**Ելակետային սցենարը** դրական սցենար է և նախատեսում է, որ Եվրամիությունում 2010 թ.-ին ՀՆԱ-ն կաճի 1 տոկոսով և 2011 թ.-ին՝ 1.7 տոկոսով:

**Տագնապային սցենարը** ենթադրում է, որ ՀՆԱ-ն չի աճի 2010 թ.-ին և 0.4 տոկոսով կնվազի 2011 թ.-ին:

**Կառավարության անկայունության շոկի** հիմնական բնութագիրը պետության պարտքային գործիքների և ընդհանրապես շուկայական պայմանների խափանումներն են, որի բազային իրավիճակային կետը վերցվել է 2010 թ.-ի մայիսին Հունաստանի հայտնի ճգնաժամային իրավիճակը: Այստեղ, խափանում ասելով ենթադրվում է պետական պարտատոմսերի եկամտաբերության աճ, որը կբերի մասնավոր հատվածի փոխառությունների ծախսերի ավելացմանը, որն էլ իր հերթին կառաջացնի

Ճգնաժամային իրավիճակ, քանի որ կազմակերպությունները և տնային տնտեսությունները կունենան իրենց պարտքերը կառավարելու խնդիրներ: Վերջապես, բանկերի համար, վտանգը կկայանա վարկերի չվերադարձման գործերի ավելացման արդյունքում:

Մթթե-տեստի արդյունքներով որոշվում է թե արդյո՞ք բանկը ունի անցողիկ միավոր և եթե ոչ, ապա որքան կապիտալի համալրում է անհրաժեշտ բանկին, միավորը անհրաժեշտ սահմանին հասցնելու համար: Այս միավորը սահմանվել է առաջին մակարդակի կապիտալի կշիռը, որի նվազագույն անցողիկ մեծությունը շոկային սցենարում 6 տոկոս է:

2010 թ. հուլիսի 23-ին Եվրամիության 91 առևտրային բանկերում իրականացված սթրես-տեստի արդյունքներով 7 բանկերում արձանագրվել են անբավարար արդյունքներ, որտեղից՝ հինգ բանկ Իսպանիայում (Unnim, Diada, Espiga, Banca Cívica, և Cajasur), մեկ բանկ՝ Չեքոսլովակիայում (Hypo Real Estate) և մեկ բանկ՝ Հունաստանում (ATEBank)։

*Աղյուսակ 1  
Եվրամիության 20 երկրների 91 առևտրային բանկերի  
սթրես-տեստերի արդյունքները, հուլիս 2010*

Բանկ	ԵՄ Երկիր	Tier 1 կապիտալ /մլն. եվրո	Ակտիվներ /մլն. եվրո	Tier 1 փաստացի կշիռ/%	Ելակետային/%	Տազնապային/%	Շոկային/%	Հավելյալ պահանջվող կապիտալ /մլն. եվրո
Erste Group Bank AG	Austria	11486	125486	9.2	10.4	8.1	8	
KBC Bank	Belgium	13440	123225	10.9	12.2	9.79	9.4	
Dexia	Belgium	17573	143170	12.3	13.4	11.2	10.9	
Marfin Popular Bank Public Co Ltd	Cyprus	2411	25622	9.4	10	8.5	7.1	
Bank of Cyprus Public Co Ltd	Cyprus	2533	24065	10.5	10.9	9.4	8	
Danske Bank	Denmark	15874	135510	11.7	11.7	10.8	10	
Jyske Bank	Denmark	1817	13494	13.5	14.1	12.8	12.5	
Sydbank	Denmark	1374	10470	13.1	14.8	13.4	13.2	
OP-Pohjola Group	Finland	5227	41480	12.6	13.4	12.5	12.3	
BNP Paribas	France	62910	620714	12.6	13.4	12.5	12.3	
Crédit Agricole	France	52405	538903	9.7	10.6	9.2	9	
BPCE	France	37574	411135	9.1	10.2	8.7	8.5	
Société Générale	France	34693	324080	10.7	11.9	10.2	10	
Deutsche Bank AG	Germany	34406	273477	12.6	13.2	10.3	9.7	
Commerzbank AG	Germany	29521	280133	10.5	10.5	9.3	9.1	
Hypo Real Estate Holdings AG	Germany	7613	80966	9.4	7.8	5.3	4.7	1245

Հայաստանի բանկերի միություն

Landesbank Baden-Württemberg	Germany	13914	142525	9.8	9.8	8.4	8.1	
Bayerische Landesbank	Germany	14788	135787	10.9	11.9	9.1	8.8	
DZ Bank AG (Deutsche Zentralgenossenschaftbank)	Germany	9408	95024	9.9	10.4	9.2	8.7	
Norddeutsche Landesbank GZ	Germany	6931	92576	7.5	8	6.4	6.2	
Deutsche Postbank AG	Germany	4906	68701	7.1	7.9	6.7	6.6	
WestLB AG	Germany	5148	35651	14.4	12.4	8.9	7.1	
HSH Nordbank AG	Germany	7491	71391	10.5	14.9	9.9	9.7	
Landesbank Hessen-Thüringen GZ	Germany	5416	61272	8.8	8.9	7.9	7.3	
Landesbank Berlin AG	Germany	5642	42363	13.3	12.8	11.3	11.2	
DekaBank Deutsche Girozentrale	Germany	2821	28815	9.8	11.1	9.5	8.4	
WGZ Bank AG Westdeutsche Genossenschafts-Zentralbank	Germany	1833	18981	9.7	10.8	9.5	9.1	
National Bank of Greece	Greece	7590	67407	11.3	11.7	9.6	7.4	
EFG Eurobank Ergasias, S.A.	Greece	5349	47827	11.2	11.7	10.2	8.17	
Alpha Bank	Greece	5920	51084	11.6	12.3	10.9	8.22	
Piraeus Bank Group	Greece	3401	37394	9.1	10.9	8.3	6	
Agricultural Bank of Greece S.A. (ATEbank)	Greece	1263	15100	8.4	10.7	8.9	4.36	242.6
TT Hellenic Postbank S.A.	Greece	1286	7525	17.1	17	15	10.1	
OTP Bank NYRT.	Hungary	3521	25463	13.8	18	16.8	16.2	
FHB Jelzálogbank Nyilvános Működő RT.	Hungary	122	1428	8.6	14.1	10.8	10.6	
Bank of Ireland	Ireland	9575	104639	9.2	9	7.6	7.1	
Allied Irish Banks	Ireland	8542	121605	7	9.5	7.2	6.5	
UniCredit	Italy	39034	452388	8.6	10	8.1	7.8	
Intesa Sanpaolo	Italy	30205	361750	8.3	9.8	8.8	8.2	
Monte dei Paschi di Siena	Italy	9093	120899	7.5	7.6	6.8	6.2	
Banco Popolare	Italy	7125	92623	7.7	7.8	7.4	7	
Unione di Banche Italiane SCPA (UBI Banca)	Italy	6817	85677	8	7.6	7.1	6.8	
Banque et Caisse D'Épargne de l'État	Luxembourg	1552	13569	11.4	14.2	11.5	11.3	

Հայաստանի բանկերի միություն

Banque Raiffeisen	Luxembourg	195	2286	8.5	9.8	8.4	8.2	
Bank of Valletta	Malta	343	3269	10.5	11.5	11	9.3	
ING Bank	The Netherlands	34015	332375	10.2	11.2	9.1	8.8	
Rabobank Group	The Netherlands	33226	236320	14.1	14.8	12.7	12.5	
ABN/Fortis Bank Nederland (Holdings) NV	The Netherlands	15481	118703	13	12	10.3	9.9	
SNS Bank	The Netherlands	2766	25885	10.7	12	10.8	10.5	
PKO Bank Polski	Poland	3960	29691	13.3	16.5	15.7	15.4	
Caixa Geral de Depósitos	Portugal	5983	71041	8.4	9.1	8.4	8.2	
Banco Comercial Português	Portugal	6102	65623	9.3	9.4	8.4	8.4	
Espírito Santo Financial Group S.A.	Portugal	5199	67899	7.7	9.2	7.4	6.9	
Banco BPI	Portugal	2210	26060	8.5	11.6	10.3	10.2	
Nova ljubljanska banka	Slovenia	917	12163	7.5	7	7.4	6.3	
Grupo Santander	Spain	56005	562616	10	11	10.2	10	
Grupo BBVA	Spain	27255	290062	9.4	10.6	9.6	9.3	
“Jupiter”: Caja Madrid, Bancaja, etc.	Spain	19244	223066	8.6	8.8	6.8	6.3	
La Caixa	Spain	16800	162979	10.3	10.6	8.5	7.7	
“Base”: Caja de Ahorros Mediterráneo, etc.	Spain	8087	86534	9.3	10.5	8.4	7.8	
Banco Popular Español	Spain	8457	92571	9.1	9.2	7.5	7	
Banco de Sabadell	Spain	5211	57958	9	9.6	7.7	7.2	
Diada	Spain	3470	52861	6.6	6.4	4.5	3.9	1032
“Breogan”: Caja de Ahorros de Galicia, Caixanova, etc.	Spain	5035	58516	8.6	10.1	7.8	7.2	
“Mare Nostrum”: Caja de Ahorros de Murcia, SA Nostra, etc.	Spain	4129	45858	9	9.7	7.6	7	
Bankinter, S.A.	Spain	2291	30659	7.5	8.4	7.6	6.8	
“Espiga”: Caja Duero, Caja España, etc.	Spain	2475	28881	8.6	8.2	6.1	5.6	127
“Banca Cívica”: Caja Navarra, etc.	Spain	2900	30055	9.6	7.6	5.2	4.7	406
Ibercaja	Spain	2369	25291	9.4	9.1	7.3	6.7	

Հայաստանի բանկերի միություն

Unicaja	Spain	2584	21909	11.8	11.8	9.6	9	
Banco Pastor	Spain	1974	18713	10.5	8.7	6.8	6	
Caja Sol	Spain	2197	21237	10.3	8.7	6.6	6	
Bilbao Bizkaia Kutxa	Spain	2812	19202	14.6	17.4	14.7	14.1	
“Unnim”: Caixa Sabadell, etc.	Spain	1426	19703	7.2	6.6	5.1	4.5	270
Kutxa	Spain	2099	16100	13	12.6	11.1	10.6	
“Caja3”: Caja Circulo, etc.	Spain	1414	14994	9.4	8.8	6.6	6.1	
Cajasur	Spain	222	12094	1.8	6.6	4.9	4.3	208
Banca March	Spain	1866	9488	19.7	20.8	19.5	19	
Banco Guipuzcoano	Spain	709	7813	9.1	8.1	6.6	6.1	
Caja Vital Kutxa	Spain	755	6652	11.3	9.5	7.5	7	
Caja de Ahorros y Monte de Piedad de Ontinyent	Spain	61	688	8.9	8.4	6.6	6.6	
Colonya, Caixa de Pollença	Spain	18	183	9.9	9.1	6.6	6.2	
Nordea	Sweden	19577	191858	10.2	11.3	10.2	10.1	
SEB	Sweden	10025	80585	12.4	11.8	10.7	10.3	
Svenska Handelsbanken	Sweden	8604	94617	9.1	10.2	9.1	8.9	
Swedbank	Sweden	7968	76518	10.4	10.7	10.5	9.9	
Royal Bank of Scotland	United Kingdom	62898	438200	14.4	14.1	11.7	11.2	
HSBC Holdings Plc	United Kingdom	122157	1133200	10.8	11.7	10.4	10.2	
Barclays	United Kingdom	49637	382649	13	15.8	13.9	13.7	
Lloyds Banking Group	United Kingdom	47530	493307	9.6	10.8	9.4	9.2	

Նշենք նաև, որ համաձայն մեր ուսումնասիրությունների անբավարար արդյունքին մոտ սահմանում, օրինակ՝ 6.3-ից մինչև 6, գտնվում են ընդհանուր առմամբ 10 բանկեր՝ 6-ը Իսպանիայից, 1-ը Հունաստանից, 1-ը Իտալիայից, 1-ը Գերմանիայից և 1-ը Սլովենիայից:

Համաձայն Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովի, այն 7 բանկերը, որտեղ արդյունքները անբավարար են պետք է նախ և առաջ գտնվեն ազգային ֆինանսական վերահսկողների ուշադրության կենտրոնում, որպեսզի պարզաբանվեն սթրես-տեստերի արդյունքների ավելի իրատեսական պատճառները և բացահայտվեն կապիտալի համալրման պոտենցիալ պահանջները: Այս բանկերը պետք է նաև ներկայացնեն տեստերի արդյունքներում բացահայտված թույլ կողմերի առողջացման իրենց պլանները:

Այնուամենայնիվ նշվում է նաև, որ սթրես-տեստի արդյունքները լիարժեք ճշգրիտ լինել չեն կարող և որ ձախողված բանկերը չի կարելի համարել անվճարունակ կամ սնանկ բանկեր: Տեստերը ավելի շուտ ցույց են տալիս թե արդյո՞ք բանկերը կմնան լիարժեք առողջ մակրոտնտեսական և այլ արտաքին ցնցումների դեպքում, որոնք պարտադիր չէ, որ առաջանան նախանշված ժամկետում՝ 2009-2010 թթ. ընթացքում:

Ինչ վերաբերում է սթրես-տեստի ընդհանրական արդյունքներին, որոնք թույլ կտան գնահատել Եվրամիության ընդհանուր բանկային համակարգը, հաշվարկվել է, որ մինչև 2011 թ.-ը ամբողջ բանկային համակարգում առաջին մակարդակի կապիտալի կշիռը 10.3 տոկոսից կնվազի ընդհամենը մինչև 9.2 տոկոս՝ շոկային պայմաններում: Այս արդյունքը գնահատվել է որպես լավ արդյունք, սակայն նախանշվել է նաև, որ այսպիսի արդյունքի պահպանման համար անհրաժեշտ է շարունակական և խորը պետական աջակցություն մի շարք բանկերին և, որ այս արդյունքը չի կարելի համարել վերջնականապես հուսալի:

Ընդհանուր առմամբ, մակրոտնտեսական տագնապային և կառավարության անկայունության շոկի պայմաններում Եվրամիության ամբողջ բանկային համակարգի հնարավոր կորուստները կարող են կազմել 566 մլրդ. Եվրո:

Հաշվի առնելով կատարված տեստի արդյունքները, Եվրոպական բանկային վերահսկողության հանձնաժողովը որոշել է այսպիսի տեստերը կատարել պարբերաբար և լինել հետևողական արդյունքներից բխող քայլերի իրականացման համար:

Նշենք նաև որ նմանատիպ սթրես-տեստ անցկացվել է նաև Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ԱՄՆ 53 բանկերում, որի արդյունքում 12-ը բացահայտվել են որպես խնդրահարույց: